Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Արարատ
aravot daily

43/4139/ 8 մարտի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

Մարտի 8-ը բոլոր կանանց տոնն է

ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի հեռակա ֆակուլտետի նախկին դեկան, Իջեւանի 52-ամյա բնակիչ Ֆեմիդա Դավթյանը մտադիր էր երեկ՝ մարտի 7-ին, նախագահական նստավայրի առաջ իրեն հրկիզել: Օրեր առաջ «Առավոտի» թղթակից Ռուզան Մինասյանի հետ զրույցում նա հայտնել էր, որ մտադիր է մարտի 8-ի նախաշեմին հրաժարակայինն ձեւով վերջ տալ կյանքին: Ֆեմիդա (իսկական անունը՝ Ֆելմիրա) Դավթյանը 2009թ. մարտի 27-ին ձերբակալվել էր հեռակա սովորող մի ուսանողից 100 հազար դրամ կաշառք վերցնելու համար: Կաշառքը տրվել էր ուսանողի կողմից՝ ընդհանուր առմամբ 12 քննություն եւ ստուգարք ստանալու համար: Ֆեմիդան իրեն մեղավոր չի համարում, ասում է, որ այդ գումարը ֆիտի ծախսվեր մասնաճյուղի՝ Երեւանից ժամանած դասախոսների համար «հաց սարքելու» համար: Նա դատապարտվել էր ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: 2011թ. փետրվարի 10-ից Ֆեմիդան ազատության մեջ է: Սակայն այսօր անելանելի վիճակում է եւ հայտարարում է. «Հայ մազոխիստ որձերն իմ արյան կարիքն ունեն»:

Կարդացեք նաեւ՝ էջ 4:

Ինչպես լինել երջանիկ

Մեր երիտասարդ երկրի 20-ամյա պատմության մեջ շատ բաներ են պատահել, որոնցից ես ամաչում եմ, նույնքան շատ բաներ, որոնցով ես հպարտ եմ: Այդ երկրորդ կատեգորիային են պատկանում հայաստանցի կանայք: Նրանք, ովքեր երկրից չեն գնացել եւ իրենց ընտանիքներով մնացել են Հայաստանում: Նրանք, ովքեր երեխային բերել եւ մեծացրել են կերոսինի լամպի տակ: Նրանք, ովքեր օրը երկու ժամ էլեկտրականության պայմաններում հասցրել են իրենց տան բոլոր գործերը: Ովքեր բարեգործական (բավականին, ի դեպ, դառնահամ) ձեթից եւ լոբիից կերակուր էին պատրաստում: Նրանց լուման մեր ժողովրդի հաղթանակում կովողներից պակաս չէ, եւ մենք բոլորս պետք է նրանց առջեւ խոնարհվենք:

Ընդհանրապես, երբ խոսվում է, այսպես կոչված, գենդերայինե հարցերի մասին, երբեմն հաշվի չի առնվում մի հանգամանք. մեզ նման ավանդական կամ, թերեւս՝ «կիսաավանդական» հասարակություններում կանանց վրա ավելի շատ պարտականություններ են դրված, եւ մենք՝ տղամարդիկ, հաճախ դա չնկատելու ենք տալիս: Մեզ ձեռնտու է այդ անհավասարությունը, մենք ի վիճակի էլ չենք լուծելու այն խնդիրները, որոնք դրել ենք կանանց ուսերին: Միակ բանը, որը մենք կարող ենք անել, նրանց շնորհակալություն հայտնելն է եւ նրանցով անկեղծորեն հիանալը՝ դա էլ հո մեծ ճիգեր չի՞ պահանջում:

Ինչպես շատ այլ հարցերում, սեռերի հարաբերությունների հարցում մենք բարդույթավորված ենք: Ընդ որում, երբ ես նայում եմ, թե ինչպես են շփվում այսօրվա տղաներն ու աղջիկները, ինձ, որքան էլ դա տարօրինակ հնչի, թվում է, թե այսօրվա երիտասարդներն ավելի բարդույթավորված են (իրենց լեզվով ասած՝ «քյարթ»), քան մենք էինք 70-80-ականներին: Եվ դա՝ այն դեպքում, երբ խորհրդային ռեժիմը առանձնապես ազատ դրսեւորվելու հնարավորություն չէր տալիս: Գուցե իր դերն է խաղում մշակութային ընդհանուր անկումը: Կամ էլ՝ պարզապես այսօրվա երիտասարդներն ավելի պահպանողական են եւ ավանդապաշտ:

Բայց նույնիսկ ամենախիստ ավանդապաշտությունը չպիտի խանգարի մեզ սրտանց գովերգել կանանց: Ոչ միայն սեղանի շուրջ հոտնկայս խմել նրանց կենացը՝ դա հաճախ ձեւական է լինում: Ավելի արդյունավետ ճանապարհ է՝ ամեն մեկս մեր հնարավորությունների չափով երես տանք նրանց՝ չվախենալով, որ նրանք մեր գլխին կնստեն: Ընդհակառակը՝ ձգտել դրան: Եվ այդժամ, հավատացեք, անձնական երջանկությունը ձեզ համար ապահովված է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Լրջանալու պա՞հը

«Կան պահեր, երբ պետք է ետ քաշվել եւ լավ նախապատրաստվել: Հիմա նման պահ է. պետք է ետ քաշվել ու հրաշալի նախապատրաստվել ապագա շատ լուրջ եւ, ցավոք, ցավալի գործընթացներին: Թե համաշխարհային գործընթացները, թե Հայաստանի ներքին գործընթացները ոչ մի լավ բան մեր ազգին ու մեզ չեն խոստանում դեռ»,- «Առավոտի» հետ զրույցում խոսելով առաջիկա քաղաքական գործընթացներում «Նոր ժամանակներ» կուսակցության մասնակցության մասին՝ ասաց կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը:

Կարդացեք էջ 3:

ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ կանանց միջազգային տոնի առթիվ: Ցանկանում ենք քաջառողջություն, հաջողություն եւ շատ ու շատ գեղեցիկ գարուններ:

Թող սերը միշտ ապրի Ձեր սրտերում, եւ Դուք շարունակեք ազնիվ ու նվիրյալ ծառայել մեր հայրենիքին եւ մեր երեխաներին: Թող այս գարնանային տոնը բազմապատկի Ձեր ուժն ու եռանդը, որպեսզի առավել նվիրումով իրականացնեք Ձեր առաքելությունը՝ մատաղ սերնդին մեսրոպահանճար մայրենին, հայրենասիրություն եւ սեր փոխանցելը:

Առողջ եղեք եւ շարունակեք աշխարհում տարածել լույսն ու բարին:

Մենք գնահատում ենք Ձեր աշխատանքը, խոնարհվում Ձեր առջեւ: Որպեսզի չփնտրենք, թե ում թույլտվությունն է պետք Ձեզ շնորհավորելու համար (քանզի վերջերս նույնիսկ արգելում են ուսուցչի Մարտի 8-ը շնորհավորել), ուստի մենք որոշեցինք այսպես ասել մեր սրտի խոսքը:

Շնորհավոր տոնդ, ուսուցիչ՝ բոլոր ժամանակների ամենանվիրյալ մարդ, ներող եղիր ժամանակի վայրիվերո գնահատականներին, քանզի Դու մշտապես մեր զավակների հոգեւոր պահապանն ես եղել: Մենք կոչ ենք անում հասարակության բոլոր անդամներին, բոլոր ծնողներին, հեռուստաընկերություններին շուռ գալ դեպի դպրոցը, դեպի ուսուցիչը, քանզի ցանկացած երկրում եթե հարգանք չլինի դպրոցի, ուսուցչի հանդեպ, այդ երկիրն ապագա չի ունենա:

Թիվ 89 դպրոցի բազմաթիվ ծնողների անունից

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Ասուլիս

Այսօր, ժամը 12:00-ին, «Պոստ Սկրիպտում» ճամուլի ակումբում ԱԺ ԲՀԿ եւ ՀՀԿ խմբակցության պատգամավորները կքննարկեն «Մարտի 8. տղամարդիկ՝ կանանց մասին» թեման:

Եղանակ

Երեւան -5 +7, Շիրակ -12 +1, Կոտայք -12 +1, Գեղարքունիք -12 +1, Լոռի -10 +6, Տավուշ -5 +12, Արագածոտն լեռներ -12 +1, Արագածոտն նախալեռն. -7 +8, Արարատ -6 +10, Արմավիր -6 +10, Վայոց Ձոր լեռներ -12 +1, Վայոց Ձոր նախալեռն. -6 +10,

«Եվրատեսիլ»-ին չմասնակցելու պատճառները

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը չի կարող պատվիրակություն ուղարկել Ադրբեջանի մայրաքաղաք Բաքու՝ 2012 թվականի մայիսին կայանալիք «Եվրատեսիլ»-ին մասնակցելու համար: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Հանրային հեռուստաընկերությունը իր՝ Բաքվում կայանալիք մրցույթին չմասնակցելու որոշման մասին մարտի 7-ին տարածած հայտարարության մեջ նշում է, որ, չնայած Ադրբեջանի իշխանությունների՝ բոլոր մասնակից երկրներին անվտանգության երաշխիքների մասին խոստումներին, օրեր առաջ Ադրբեջանի նախագահն այդ երկրներից մեկի համար «բացառություն արեց»՝ հայտարարելով, թե Ադրբեջանի թիվ մեկ թշնամին աշխարհասփյուռ հայությունն է:

«Փաստացի կարող ենք արձանագրել, որ «Եվրատեսիլ»-ը հյուրընկալող երկրի նախագահը պաշտոնապես հայտարարում է, որ բոլոր հայերը, այդ թվում նաև նրանք, ովքեր ընդգրկված պետք է լինեին «Եվրատեսիլ»-ի պատվիրակության մեջ, Ադրբեջանի թշնամիներն են: Հետևաբար, որևէ տրամաբանություն չկա մասնակից ուղարկել մի երկիր, որտեղ նրան դիմավորելու են որպես թշնամու: Սա մեզ համար սկզբունքային խնդիր է»,- գրված է հայտարարության մեջ:

Հանրայինը գտնում է, որ այն մթնոլորտը, որը ձեւավորվել է նմանատիպ եւ այլ հակահայկական հայտարարությունների եւ գործողություններին ֆոնին, չի կարող հավասար պայմաններ առաջանալ «Եվրատեսիլ»-ին մասնակցող բոլոր երգիչների համար, ինչը, հեռուստաընկերության պատկերացմամբ, մրցույթի հիմնական բաղադրիչներից մեկն է:

Հեռուստաընկերությունը հայտարարում է, որ հետագայում էլ շարունակելու է մասնակցել «Եվրատեսիլ»-ին եւ ներկայացնելու Հայաստանը համաեվրոպական երգի մրցույթին:

Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը 2006 թվականից ակտիվորեն մասնակցել է «Եվրատեսիլ», իսկ 2007 թվականից «Մանկական Եվրատեսիլ» երգի մրցույթներին՝ ամեն տարի մասնակից ներկայացնելով Հայաստանից:

2011 թվականի դեկտեմբերին Հայաստանը հյուրընկալեց «Մանկական Եվրատեսիլ» երգի մրցույթը, որն անցավ համերաշխության մթնոլորտում եւ բարձր գնահատականի արժանացավ բոլորի կողմից: 2012-ին առաջին անգամ Հայաստանը կմասնակցի մայիսին Վիեննայում կայանալիք դասական երաժշտության «Պատանի երաժիշտների Եվրատեսիլ-2012» մրցույթին: Հեռուստաընկերությունը պատրաստակամ է շարունակել համագործակցությունը Եվրոպական հեռարձակողների միության հետ ընդհանրապես եւ «Եվրատեսիլ»-ի հետ՝ մասնավորապես:

ԿԸՀ-ում կքննարկեն ՁԼՄ-ների մտահոգությունները

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը չբացառեց, որ ՁԼՄ-ների մասով ԿԸՀ որոշումը կարող է վերանայվել:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2012 թվականի հունվարի 31-ին ընդունված «ԿԸՀ-ում լրագրողների հավատարմագրման կարգը սահմանելու մասին» թիվ 18-Ն որոշումը մտահոգել է լրագրողական համքարությանը: Մեր գործընկերներից շատերը հրապարակված այս կարգը «անհասկանալի», «խայտառակություն» եւ «ոչ իրավաչափ» են որակել՝ նկատի ունենալով սույն որոշման 9-րդ եւ 11-րդ կետերում սահմանված ձեւակերպումները: Խոսքը մասնավորապես այդ ձեւակերպումների մասին է. լրագրողի հավատարմագրումը մերժվում (9-րդ հոդված) եւ կամ դադարեցվում (11-րդ հոդված) է, եթե լրագրողն «անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչվել դատական կարգով», եթե «դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ», եթե «նա տարածել է ընտրական հանձնաժողովների (պաշտոնատար անձանց) գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով»:

Մեր գործընկերներից շատերի համոզմամբ՝ այս դրույթները վտանգավոր են, որովհետեւ կարող են լրագրողին կամ լրատվամիջոցին լռեցնելու համար որպես մահակ օգտագործվել, առավել եւս ընտրական շրջանում լրագրողների դեմ քրեական գործեր «սարքել», մեղադրել նրանց «իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ» տարածելու մեջ եւ մերժել կամ դադարեցնել նրանց հավատարմագրումը ԿԸՀ-ում: Կա նաեւ այսպիսի դիտարկում՝ ի՞նչ կապ ունի՝ լրագրողը նախկինում դատապարտված եղե՞լ է, թե՞ չի եղել, եթե օրենսդրությամբ նման պահանջ չի ներկայացվում նույնիսկ ԱԺ պատգամավոր ընտրվելու կամ կառավարության կազմում ընդգրկվելու, պետական պաշտոն զբաղեցնելու դեպքում: Ասել, թե այս հարցադրումներն ու դիտարկումները հիմնազուրկ կամ չափազանցված են, թերեւս, ճիշտ չէր լինի՝ նկատի ունենալով հայրենի իշխանությունների երեւակայությունն ու ընտրությունների ընթացքում անօրինականությունները ու կեղծիքները ծածկադմփոց անելու նրանց որդեգրած մարտավարությունը: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ այս նույն՝ բառացիորեն նույնաբովանդակ կարգը, միայն հոդվածների թվագրման տարբերությամբ, ընդունվել ու գործել էր դեռեւս 2004-ի ապրիլի 29-ից, երբ ՀՀ ԿԸՀ-ն, նախկին նախագահ Գարեգին Ազարյանի գլխավորությամբ, ընդունել էր «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշումը (http://www.elections.am/images/docs/voroshgirk.pdf, 5-րդ էջում է տեղադրված): Այս մի որոշման մեջ վիճահարույց կամ խայտառակ որակված դրույթները նույնությամբ կրկնվում են 10-րդ եւ 12-րդ կետերում:

Ուրեմն՝ ինչո՞ւ մենք հենց հիմա ուշադրություն հրավիրեցինք այս փաստի վրա եւ դրա մեջ լրատվամիջոցներին ու լրագրողներին սպառնացող վտանգ տեսանք: Հավանաբար, խնդիրն այն է, որ ի տարբերություն 2004-ին ընդունված կարգի՝ այս անգամ գործող ԿԸՀ-ի որոշումը կայացվել է ընտրական տարում, նաեւ այն պատճառով, որ դարձյալ ի տարբերություն 2004-ի՝ այս անգամ ԿԸՀ կայքում տեղադրված հավատարմագրման օրինակելի ձեւաթղթում հատուկ շեշտում է պահանջում առ այն, թե «վերոնշյալ անձինք»՝ հավատարմագրվող լրագրողները, դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ չե՞ն ճանաչվել, դիտավորյալ հանցագործության համար չե՞ն դատապարտվել, դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված է կամ հանվա՞ծ է եւ այլն:

Այսուհանդերձ, ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը երեկ չբացառեց, որ այս կարգը կարող է վերանայվել: «Ինձ համար մի քիչ արտառոց է, որ այս որոշումը նման արձագանքների արժանացավ, որովհետեւ այդ որոշման մեջ ամրագրված դատողությունները գուցե ոմանց համար նոր հայտնություն էին, բայց դրանք նոր բան չէին: Այդ բոլոր կանոնակարգումները կային 2004-ին ընդունված որոշման մեջ, որը գործել է մինչեւ 2011 թվականը, բայց երբեւէ նման արձագանք չի եղել: Ավելին, այն դրույթները, որոնք ամրագրված են, որոնք հիշատակվում են, դրանցով երբեւէ լրագրողի իրավունքի սահմանափակում չի եղել, որովհետեւ այդ նորմերը երբեք չէին գործադրվել, եւ դրանցով պայմանավորված՝ որեւէ մեկի իրավունքի սահմանափակում ընդհանրապես տեղի չի ունեցել: Այսօր էլ ԿԸՀ-ն նշված կարգի համաձայն ստացել է շուրջ 26 կազմակերպություններից՝ ավելի քան 40 լրագրողների դիմումներ, եւ բոլոր դեպքերում բոլոր հավատարմագրումները կատարված են, եւ մերժման որեւէ դեպք չկա, առավել եւս՝ նշված նորմերի հիշատակմամբ»: ԿԸՀ նախագահը եւս մեկ անգամ հիշեցրեց, որ հավատարմագրումն արվում է բացառապես ԿԸՀ նիստերին մասնակցելու համար, իսկ ահա ընտրությունների ժամանակ ընտրատարածքներում եւ տեղամասերում լրագրողի մուտքն ազատ է, եւ նրանց որեւէ իրավունք ԿԸՀ-ում հավատարմագրված լինել-չլինելով չի կարող սահմանափակվել: «Բավարար է՝ լրագրողը գնա ընտրատեղամաս, ներկայացնի իր լրագրողի վկայականը, եւ դա արդեն բավարար հիմք է, որպեսզի նա լիարժեք կերպով մտնի տեղամաս եւ իրականացնի լրագրողի իր իրավունքները»,- հայտարարեց Տիգրան Մուկուչյանը:

Նա նաեւ հավելեց, թե կոնկրետ այս խնդրի հետ կապված մամուլի էջերում հնչած մտահոգությանը ԿԸՀ-ում էլ են ծանոթ. «Մենք ինքներս էլ առավոտյան քննարկում ունեցել ենք, եւ, համենայնդեպս, հնչեցված մտահոգությունը մեկ անգամ եւս քննության առարկա կդարձնենք: Ես կարծում եմ՝ շատ մոտ ապագայում ԿԸՀ-ն իր որոշակի վերաբերմունքն այդ հարցի վերաբերյալ կներկայացնի, որպեսզի այդ մտահոգություններն ընդհանրապես վերանան, թեեւ ԿԸՀ որոշումը երբեւէ եւ որեւէ հետին միտք չի հետապնդել»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Երեւանում ոչնչացվել է երեսուն պատմամշակութային հուշարձան

Երեւան քաղաքի 30 պատմամշակութային հուշարձաններ մինչ այժմ ոչնչացվել են, 9-ը պատրաստվում են տեղափոխել, 5-ին սպառնում է նշվածների ճակատագիրը: Մայրաքաղաքի հուշարձանների պահպանության ահա այսպիսի անմխիթար վիճակն է պատճառ դարձել, որպեսզի Երեւանի պաշտպանության նախաձեռնությունների միավորումը վաղվանից Թամանյանի արձանի շրջակայքում եւ Մաշտոցի պուրակում սկսի ամենօրյա ստորագրահավաք՝ ուղղված Երեւանի պաշտպանության խնդիրներին: Նախաձեռնության անդամ հինգ քաղաքացիական նախաձեռնությունները քաղաքացիների ստորագրությունները կներկայացնեն ՀՀ նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին եւ Երեւանի քաղաքապետին:

Երեկ «Արմատ» ակումբում տեղի ունեցած ասուլիսի ընթացքում քաղաքի պատմամշակութային հուշարձանների պաշտպանության հարցերով զբաղվող քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչները բարձրացրին մի շարք հրատապ խնդիրներ: Օրինակ՝ «Մոսկվա» կինոթատրոնի ամառային դահլիճի պահպանության քաղաքացիական նախաձեռնության ղեկավար Սահրատ Պետրոսյանը նշեց. «Այսօր վտանգված է Փակ շուկան, հենց այսօր քանդվում է արդարադատության նախարարության շենքը, որը Սեւան հյուրանոցի մի հատվածն է»: Միեւնույն ժամանակ Ս. Պետրոսյանը նշեց, որ այսօր նկատելի է նաեւ իշխանությունների տոլերանտ վերաբերմունքը. գոնե հիմա լսում են իրենց:

Aravot.am-ի այն դիտարկմանը՝ դա արդյոք չի՞ նշանակում, որ այդպիսով իշխանությունները ցանկանում են հասարակության եւ նման նախաձեռնությունները համակարգողների գլխի տակ փափուկ բարձ դնել, Ս. Պետրոսյանը պատասխանեց. «Մեկ շաբաթ առաջ մենք հանդիպում ենք ունեցել քաղաքապետի հետ: Իհարկե, չեմ կարող ասել, որ այն արդյունավետ է եղել, քանի որ ես անգամ ձայնի իրավունք չունեցա, սակայն 2005-ի հետ համեմատած իրավիճակը փոխվել է»: Մեր մյուս հարցին՝ ի՞նչ արդյունքի կարող են հասնել հասարակությունը եւ նման նախաձեռնությունները, եթե իրականում պայքարում են օլիգարխների դեմ, որոնք ունեն իշխանությունների բացահայտ հովանավորությունը, Ս. Պետրոսյանը պատասխանեց. «Երբ 2005-ից մենք սկսեցինք պայքարել այս խնդիրների դեմ, այն ժամանակ մեր նամակներին անգամ չէին պատասխանում: Հիմա գոնե մշակույթի նախարարությունը պատասխանում է՝ չնայած անհասկանալի ձեւակերպումներով շատ զավեշտալի պատասխաններ է տալիս: Այնպես չէ, որ արդյունքներ չկան, օրինակ՝ Հանրապետության հրապարակի, Թոչկանի նախադեպերը: Հիմա մենք պայքարում ենք, որպեսզի նոր Մաշտոցներ չլինեն»:

«Մեր քաղաքը» հանրային քաղաքացիական նախաձեռնության ղեկավար Գրիգոր Ղազարյանն էլ թվեց հասցեներ, որտեղ արդեն իրականացվում են շինարարություններ, ինչի արդյունքում վտանգվում են Երեւանի պատմամշակութային հուշարձանները. Աբովյան 3/1, Սարյան 26 եւ այլն:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 08.03.2012

ՆԺԿ-Ն հնարավոր է՝ չմասնակցի խորհրդարանական ընտրություններին

Պատճառն, ըստ կուսակցության նախագահ Արամ Կարապետյանի, Ֆինանսական եւ մարդկային ռեսուրսը չէ

- «Նոր ժամանակներ» կուսակցությունը չի՞ մասնակցելու առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Կարծես չեք շտապում հայտարարություններ անել:

- Դեկտեմբեր ամսից սկսած՝ իրավիճակն այնպիսի փոփոխություններ է կրել, որ ես, որպես քաղաքական գործիչ եւ կուսակցության լիդեր, մտածում եմ՝ ընդհանրապես պե՞տք է մասնակցել այդ ընտրություններին, թե՞ ոչ:

- Ի՞նչն է փոխվել:

- Ես անձնական կարծիքս կարտահայտեմ, որովհետեւ ձեւավորված կուսակցական կարծիք դեռեւս չկա: Կարծում եմ, որ իրավիճակը, որը պետք է ընտրություններից առաջ ստեղծվեր Հայաստանում, պետք է բարվոք դառնար գաղափարական պայքար տանելու համար: Այնինչ, իշխանությունն, ինչպես տեսնում ենք, ոչինչ փոխել չի ցանկանում: Ընդհանրապես: Ամեն ինչ գնում է հին ձեւով. նույն օլիգարխների մասնակցությունը, նույն քաղաքական իմիտացիաները, կոալիցիայի մեջ նույն տարաձայնությունները: Իրականում ոչինչ էլ չկա, այսինքն՝ որեւէ նոր իրավիճակ, որի պարագայում կարելի էր գնալ ընտրությունների՝ ոչ մանդատի համար, այլ իրավիճակը փոխելու՝ չկա: Նույնիսկ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ավելի շոշափելի կարծիք կար, որ կարող է այդպես լինել: Հիմա՝ ընդհակառակը: Ռուբեն Հայրապետյանը եւ մյուսները, ովքեր այն ժամանակ չէին ուզում, հիմա, կարծես, ստիպում են, որ մասնակցեն ընտրություններին:

Իրավիճակը, որը հիմա Հայաստանում ստեղծվել է, թույլ չի տալու գաղափարական պայքար տանել եւ խորհրդարանական ընտրությունները իսկապես դարձնել համակարգային փոփոխության ձեւ, գործիք, փուլ:

- Իսկ Դուք ի՞նչ եք առաջարկում՝ «ձեռքերը ծալած նստելով» որեւէ բան կփոխվի՞:

- «Ձեռքերը ծալած նստելու» մասին չէ խոսքը: Իշխանության մասին խոսել չեմ ցանկանում, որովհետեւ Սերժ Սարգսյանը նորից ասելու է, որ ամեն ինչ լավ է ու բավարարելով նաեւ արտաքին խաղացողներին՝ «քոքաշ» հասնի պաշտոնավարման երկրորդ շրջանին, մի կերպ անցկացնի: Ընդդիմությունը երկու տարբերակ ունի. առաջինը՝ բոլորն ասում են՝ հեսա կմասնակցենք, հեսա կտեսնեք եւ այլն: Այդ ճանապարհը բոլորն էլ լավ գիտեն: Լավագույն դեպքում ամեն ինչ վերջանում է Երեւանի ավագանու ընտրություններով. անցնում են նրանք, ովքեր անցնում են, ընդդիմությունն էլ բոյկոտում է աշխատանքները: Այդ պարագայում ընդդիմությունն ուղղակի լեգիտիմացնում է իշխանությանը: Հետո է, որ այդ մասին ասում ես՝ հազար բացատրություն են գտնում:

Հիմա Հայաստանում բոլորին՝ ինձ, որպես վերլուծաբանի, քաղաքագետի, ոչ թե կուսակցության առաջնորդի, հասկանալի է, որ իշխանությունն ընտրությունն անցկացնելու է նույն ձեւով: Դրա վառ օրինակն էլ Ռուսաստանի Դաշնությունում կայացած ընտրություններն են, որոնք միշտ ազդեցություն են ունեցել Հայաստանում՝ անկախ նրանից, թե ով ինչ է ասում: Նույն ձեւով՝ ոչ կոռիտ, ոչ ծեծ ու ջարդով, պայմանավորվելու են, մեծամասնություն են լինելու, մասնակցող ընդդիմությունն էլ գոռալու է, ճվալու է, ասելու է՝ վերջում լեգիտիմացնելու է իշխանությանը:

- Երկրորդ տարբերակը չասացիք, թե որն է:

- Չմասնակցել ընտրություններին, փորձել գտնել նոր պայքարի ձեւեր: Իրավիճակն ընտրություններից հետո դառնալու է նոր, հին պայքարի ձեւերն էլ չեն գործում: Նոր դաշինքներ, նոր գաղափարախոսություն, նոր ծրագիր է պետք: Արամ Կարապետյանը կարող է նույնիսկ մեծամասնականով, երեւի կբավարարի... բայց դա փոփոխությունների ձեւ չէ: Իմիջայլոց, մեր դեպքը շատ յուրօրինակ է լինելու՝ եթե չմասնակցենք, որովհետեւ մենք դրա համար ամեն ինչ ունենք՝ թե ֆինանսական ռեսուրսներ, թե քաղաքական թիմ, թե կուսակցական կառույցներ: Մեր որոշումը լինելու է զուտ քաղաքական:

- Բայց Ձեր քաղաքական թիմն էլ նախորդ ընտրությունների շրջանի հետ համեմատած՝ նոսրացել է: Արդյոք նաեւ դա պատճառ չէ՞ չմասնակցելու համար:

- Ոչ, ես նույնիսկ մեծամասնականով էլ չեմ մասնակցելու:

- Կարծում եք՝ թիմով կամ անհատապես Ձեր կողմից ընտրություններից հրաժարվելը որեւէ ազդեցություն կթողնի՞ քաղաքական զարգացումների վրա:

- Իսկ մեզ չի հետաքրքրում: Մեզ հետաքրքրում է միայն հետեւյալը՝ հնարավո՞ր է, արդյոք, հետագայում ստեղծել մի այնպիսի թիմ, իրավիճակ, գործողությունների ծրագիր եւ այլն, որը թույլ կտա Հայաստանում բան փոխել: Թե չէ՝ վերցնել մանդատ եւ գնալ նստել մարդկանց հետ, որոնց մի մասը քվեարկում է մյուսների փոխարեն, մի մասն ընդհանրապես չի քվեարկում՝ հայիոյում է, մյուսն ասում է՝ ականջները լվացած են, թե չէ եւ այլն... նմանատիպ մանդատի համար ես պայքարի չեմ գնա՝ ոչ մի ձեւով:

Եկեք մեկ անգամ ճշմարիտ լինենք. այսօր եթե կարող ենք իրավիճակը փոխել ընտրությունների ճանապարհով՝ գնանք մասնակցենք, եթե չենք կարող փոխել՝ ուրեմն լեգիտիմացնելու ենք իշխանությանը: Եկեք սա ընդունենք, ընկալենք եւ ճշմարիտ ասենք: Բացատրությունները երկրորդ-երրորդական են. թիմը նոսրացել է, մեր թիմն ավելացել է, սրա ձայնն ավելացել է, նրանը պակասել է, ես ենք արել, են ենք արել... բոլորի թիմն էլ նոսրացել է՝ ժողովուրդը երկրից գնացել է, եւ շարունակում են գնալ: Ոչ մեկի թիմն էլ այնպիսի հրաշալի թիմ չէ, որ ասենք՝ չգիտեմ ինչ են: Իշխանության մեջ եղածները ուզում են իշխանության մեջ լինել էլի, իշխանության մեջ չեղածները ուզում են իշխանության մեջ լինել: Էդ ո՞ր թիմն է, որ համաշխարհային տնտեսագետներին ու փիլիսոփաներին բերել են, օրենքից հասկացող մարդկանց բերել են, որ մենք էլ ասենք՝ հա: Նույն Հանրապետականի տղերքն ու աղջկերքը չե՞ն: Նույն ԲՀԿ-ի ժողովուրդը չի՞:

- Անցած տարիներին «Ժառանգությունը» ցույց տվեց, որ փոքր թիմով էլ կարելի է մի բան անել, արդյունքներ գրանցել:

- Ի՞նչ ռեալ արդյունք գրանցեցին:

- Թեեւ իրավապաշտպան, բայց գործունեություն ծավալեցին:

- Իրավապաշտպան գործունեություն ծավալելու համար պատգամավոր լինել պետք չէ: Կարելի է դառնալ համաշխարհային իրավապաշտպան կազմակերպության մաս: Շատ հրաշալի եւ մեծ աշխատանք է: Մարդասիրական գործունեությամբ Հայաստանում իրավիճակ չի փոխվում:

- Ամենամեծ ընդդիմադիր ուժը՝ ՀԱԿ-ը, գնում է խորհրդարանական ընտրությունների այն ակնկալիքով, որ դրանք լինելու են նախագահական ընտրությունների առաջին փուլը: Դուք մեղադրում եք ՀԱԿ-ին Սերժ Սարգսյանին լեգիտիմացնելու մե՞ջ:

- Եթե ավարտվեց այնպես, ինչպես ավարտվեց Երեւանի ավագանու ընտրությունները, իսկ ես դրանում կասկած չունեմ, այո՝ ՀԱԿ-ը լեգիտիմացնելու է իշխանությանը:

- Իսկ ՆԺԿ-ն ի՞նչ է անելու:

- Մենք շարունակելու ենք պայքարի ձեւեր փնտրել, եւ ասեմ, դրա որոշակի սաղմերն արդեն կան:

- Որո՞նք են:

- Ես հիմա այդ մասին չեմ խոսի, որովհետեւ դեռ սաղմեր են, բայց մի բան խոստանալ կարող եմ՝ եթե չմասնակցենք ընտրություններին՝ ձեռքերս ծալած չենք նստելու: Ես գոհ եմ այն ընթացքից, որ չերեւացող, բայց հստակ գնում է: Շատ հետաքրքիր զարգացում է տեղի ունենում, շատ հետաքրքիր մարդիկ են հրաժարվում: Մարգարյան Գառնիկը հրաժարվեց, Վաղարշակ Հարությունյանը, Սամվել Հարությունյանը, համարյա ամբողջությամբ «Հանրապետություն» կուսակցությունը, Պարույր Հայրիկյանն է հրաժարվել... կարծում եմ՝ էլի մարդիկ ու ուժեր կտեսնենք: Տեսեք՝ ի՞նչ մեծ թիմ է դառնում, ինչքա՞ն հայտնի գործիչներով: Կարո՞ղ է Սմբատ Այվազյանը կամ Սուրեն Աբրահամյանը պատգամավորի բան չէին, որ նրանց փոխարեն չգիտեմ որ մեկի փեսան կամ ինչ-որ անհասկանալի օլիգարխ, որ չորս բառից ավելի իրար հետ չի կարողանում կապել, կտանեն խորհրդարան: Սերժ Սարգսյանը փող ունի, հնարավորություն ունի՝ թող բերի, մի հատ էլ խայտառակ լինի, հետո ինքն իր գլուխը բռնի ու նստի:

- Իսկ ե՞րբ տեսանելի կլինի Ձեր նշած ընթացքը:

- Կարծում եմ՝ ընտրություններից հետո: Ընտրություններից հետո, այսպես թե այնպես, պայքարը սկսվելու է: «Արդարություն» դաշինքի նախադեմը կա. մարդիկ գնացին խորհրդարան ու չգնացին՝ բոյկոտեցին: Ես չէի ցանկանա, որ ընդդիմադիր ուժերը նույն ճանապարհով անցնեին: Խելոք մարդը նույն ճանապարհը երկու անգամ չի կտրում: Եթե հստակ երեւում է, թե ինչ է լինելու, խելոք մարդը ճանապարհի կեսին կամ սկզբում կանգնում է եւ որոշում է՝ ի՞նչ անել: Պատճառաբանությունները հետաքրքիր չեն: Մի բան հստակ է՝ այս իրավիճակով, այսօրվա Հայաստանում ընդդիմությունը որեւէ կարդինալ փոխել չի կարող դեռ:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տղամարդիկ ձախողել են քաղաքականությունը, ժամանակն է՝ տիկնայք շտկեն նրանց սխալները

«Տեսակետ» ակումբում երեկ հյուրընկալվել էին կին քաղաքական գործիչներ՝ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Լիլիթ Գալստյանը եւ ՍԴՀԿ նախագահ, ՀԱԿ ներկայացուցիչ Լյուդմիլա Սարգսյանը: ՕԵԿ անդամ Հեղինե Բիշարյանը նույնպես հրավիրված էր, սակայն չկարողացավ գալ:

Լիլիթ Գալստյանը, խոսելով կանանց իրավունքների մասին, նկատեց, որ մեր երկրում ոչ միայն կանանց, բոլորի՛ իրավունքներն են «խեղված, եւ ինչու չէ՝ բռնաբարված», ապա բերեց մի քանի թվային տվյալներ, որոնք ապացուցում էին, թե ինչ «բացառիկ անպատվաբեր» վիճակում է կանանց ներգրավվածությունը երկրի կառավարմանը: Չնայած աշխարհում քաղաքականությանը կանանց ներգրավվածությունը միջինը 22,5% է, սակայն Հայաստանում այդ թիվը շատ ավելի փոքր է՝ ԱԺ-ում՝ ընդամենը 9,4% է կամ 131 պատգամավորից՝ 11-ը, կառավարությունում էլ շատ քիչ կանայք կան: Տիկին Գալստյանը նաեւ նշեց, որ ունենք մեկ կին մարզպետ, սակայն այդ տվյալը հնացած է, արդեն երկար ժամանակ է՝ չունենք կին մարզպետ, փոխարենը ունենք ընդամենը 24 կին գյուղապետ:

Տիկին Գալստյանը խոսեց նաեւ օրենքով սահմանված քվոտավորումից, որի համաձայն՝ առաջիկա խորհրդարանում համամասնական ցուցակներում յուրաքանչյուր 5-րդը պետք է լինի կին: Դաշնակցության ցուցակը նույնպես այդ սկզբունքով է ձեւավորվելու՝ «մենք օրենքը չենք խախտելու»: Նա միայն մտավախություն ուներ, որ քվոտավորումը չդառնա ֆորմալ, եւ զուտ օրենքի պահանջը կատարելու համար գործից չհասկացող կամ համապատասխան արժանիքներ չունեցող եւ միայն կոճակ սեղմելու նպատակին ծառայող կանանցով չլցնենք խորհրդարանը:

Իսկ ՍԴՀԿ նախագահ Լյուդմիլա Սարգսյանն ասաց, որ կնախընտրեր, որ կանայք այնքան արժանավոր լինեին, որ առանց որեւէ քվոտավորման տեղ ունենային խորհրդարանում, եւ ընդհանրապես՝ քաղաքականության մեջ: Նաեւ նկատեց, որ չնայած խաղի կանոնները սահմանում են տղամարդիկ, եւ կանանց համար մի փոքր դժվար է խաղալ նրանց սահմանած կանոններով, սակայն այն կանայք, ովքեր փորձ են անում «դուրս գալ իրենց խոհանոցներից» եւ նպատակաուղղված առաջ են գնում՝ շատ բաների են հասնում: Տիկին Սարգսյանը նաեւ համարում է, որ հայ կանայք միշտ իրենց երկրորդ պլանում են պահել, զիջել են տղամարդկանց, որպեսզի վերջիններս կարողանան ինքնադրսեւորվել, սակայն անհրաժեշտ եւ կարեւորագույն պահին կանայք իրենց դերը կատարել են:

Իր հերթին Լիլիթ Գալստյանը նկատեց, որ այսքան տարիներ տղամարդիկ են Հայաստանում քաղաքականություն իրականացրել եւ ամեն ինչ իրենց ձեռքն են վերցրել, սակայն փաստը մնում է փաստ, որ «ձախողել են»:

Լյուդմիլա Սարգսյանը, ի պատասխան տղամարդ լրագրողի հարցի, թե այդ քվոտավորմամբ արդյոք չե՞ն խախտվում տղամարդկանց իրավունքները, ասաց. «Մի անհանգստացեք, մենք չենք փորձում տղամարդկանց տեղը զբաղեցնել, մենք ուզում ենք ընդամենը նրանց լրացնել: Կանայք շատ ավելի կրթված, սկզբունքային են եւ նվիրված են, բայց ներկայացված չեն եւ որոշումների վրա ազդելու հնարավորություն չունեն: Երբ կգա ժամանակը եւ կարիք չի լինի քվոտաներով պարտադրելու, բոլորը հավասար իրավունքներ կունենան եւ քաղաքականության մեջ կլինեն արժանիները՝ առանց նայելու՝ տղամա՞րդ են, թե՞ կին»:

Լիլիթ Գալստյանը այս կապակցությամբ հայտարարեց. «Ես դեմ եմ, որ մենք լրացնում ենք տղամարդկանց: Ես իմ ասելիքի տերն եմ եւ միշտ վերջ գնում եմ դրա հետեւից, երբեք չեմ ապրում ինչ-որ մեկին լրացնելու համար»: Այս խոսքերից Լյուդմիլա Սարգսյանը մի փոքր ազդվեց, եւ ինքն իրեն լրացրեց. «Ես ինքս էլ շատ ինքնուրույն եւ առաջադեմ մարդ եմ, որ երբեք թույլ չի տա, որ իրեն որպես լրացում դիտարկեն: Ուզում էի ասել, որ տղամարդիկ էլ մեզ են լրացնում, եւ մենք միասին ենք ամբողջությունը ներկայացնում»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մարտի 8-ին շոգեբաղնիք, ստրիպտիզ-ակումբ կամ ռեստորան չեն հրավիրի

«Առավոտը» զրուցեց Ազգային ժողովի մի քանի պատգամավորների հետ եւ փորձեց պարզել, թե կանանց տոնի առթիվ ինչ յուրահատուկ նվեր են մատուցելու:

Կանանց տոնին՝ մարտի 8-ին, նվերների ու շնորհավորանքների առումով մեր քաղաքական գործիչներն օրիգինալությամբ չեն փայլում: Մեզ հետ զրուցած պաշտոնյաներն ու օրենսդիրները սահմանափակվում են ծաղիկներ ու օծանելիք նվիրելով:

ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը կնոջն ու դստերը ծաղիկներ է նվիրելու: Պարոն Դալլաքյանն ասաց, որ չի սիրում ծաղիկներ գնելու գործընթացը, բայց ոչ այն պատճառով, որ մարտի 8-ին ծաղիկների գները բավականին բարձր են լինում, այլ՝ ծաղկավաճառները նրան ճանաչելով՝ ուզում են ծաղիկներն անվճար տալ. «Ծաղկավաճառներն ինձ ասում են՝ ոչ, ձեզանից գումար չենք վերցնի, մենք ձեզ շատ սիրում ենք: Ես ասում եմ՝ ո՛չ, պիտի վճարեմ ու վճարում եմ: Էդ պրոցեսից շատ քաշվում եմ: Ես նաեւ իմ մտերիմներին ու բարեկամուհիներին եմ շնորհավորում»:

Մեր այն հարցին, թե կանանց նվիրված տոներին արտերկրում ավելի «օրիգինալ» նվերներ են մատուցում, օրինակ՝ տիկնոջ հետ շոգեբաղնիք, ստրիպտիզ-ակումբ կամ մի առանձնահատուկ ռեստորան են գնում, եւ արդյոք պարոն Դալլաքյանը երբեւէ նման յուրահատուկ նվեր մատուցե՞լ է, պարոն Դալլաքյանը պատասխանեց. «Նման երեւույթներին հումորով եմ մոտենում: Ես ինքս հաճախում եմ պոլիտեխնիկական ինստիտուտի լողավազանը, ֆուտբոլ եմ խաղում, նաեւ շոգեբաղնիքից եմ օգտվում, բայց դա ընկերներիս հետ եմ անում, այսինքն՝ դա իմ մոտ սպորտային հակում է, ոչ թե այլ հակումներ: Իսկ ընդհանրապես՝ այդ օրն ինքնին յուրահատուկ օր է, էլ պետք չէ ինչ-որ յուրահատկություն մտցնել»,- ասաց պատգամավորը:

ԱԺ պատգամավոր Վահան Հովհաննիսյանն ասաց, որ միամյակի հետ կապված արդեն մի քանի տարի է՝ մշակութային նվեր է մատուցում նաեւ իրեն ընտրող վանաձորցի 7000 կանանց. այդ կանայք մարտի 8-ից ապրիլի 7-ը Վիկտոր Դալլաքյանի հովանավորությամբ հաճախում են թատրոն:

ԱԺ ՀՅԴ պատգամավոր Վահան Հովհաննիսյանից հետաքրքրվեցինք, թե այսօր ի՞նչ նվեր է մատուցելու տիկնոջը, պատգամավորն ասաց. «Նայած տրամադրության»: Մեր դիտարկմանը, որ այդ օրը կանանց տրամադրությունն է բարձր լինում՝ ի տարբերություն տղամարդկանց, որ ծախսի տակ են ընկնում, Վահան Հովհաննիսյանն ասաց. «Խոսքն իմ մասին չէ, իմ տրամադրությունը միշտ էլ լավ է լինում»: Ապա ասաց, որ՝ ծաղիկներ: Հարցին էլ, թե որեւէ յուրահատուկ նվերներ չի՞ պատրաստում, Վ. Հովհաննիսյանը վստահեցրեց, որ երբեմն բացառություններ անում է:

Մեզ հետ զրուցած պատգամավորներից միայն Ստյոպա Սաֆարյանն էր, որը «օրիգինալ» նվերներ է մատուցում: Նրա ներկայացմամբ՝ նվերներ մատուցելու համար երբեք չի սպասում մարտի 8-ին կամ ապրիլի 7-ին. «Եթե ինչ-որ մի բան տեսնում եմ այստեղ կամ արտերկրում եւ վստահ եմ լինում, որ դուր կգա՝ անպայման գնում եմ նվերը: Իսկ կանանց տոներին, անշուշտ, նվազագույնը որ պիտի անեմ, իմ հարազատներին՝ կնոջս, աղջկաս, մայրիկիս ու քույրերիս, ծաղիկներ նվիրելն է: Եթե ժամանակս հերիքում է, այլ գնումներ էլ եմ անում»: Ինչ վերաբերում է յուրահատուկ նվերին, ասենք՝ ռեստորան, ստրիպտիզ-բար կամ նման այլ զվարճանքի վայր հրավիրելուն, ապա պարոն Սաֆարյանը վստահեցրեց, որ այս դեպքում էլ չի սպասում, որ անպայման տոն լինի, որ նոր հաճախեն նման վայրեր:

Իսկ թե ինչ նվերներ է սիրում մատուցել իր սիրելի կանանց, պարոն Սաֆարյանն ասաց, որ ամենատարբեր բաներ՝ զարդերից սկսած միինչեւ հագուստ եւ այլն: Մեզ հետ զրույցում պարոն Սաֆարյանը վստահեցրեց, որ կինն իր ճաշակին ավելի է վստահում. «Չի եղել մի դեպք, որ իր համար մի բան գնեմ ու դա իրեն դուր չգա: Միշտ հաճույքով է կրում: Կինս երբեմն մի բան որ ուզում է գնել, ինձ ցույց է տալիս ու հարցնում՝ լա՞վն է, թե՞ ոչ»:

Իսկ թե տիկնոջ ամենասիրած նվերը որն է՝ պարոն Սաֆարյանը վերհիշեց Անգլիայում իր ուսանելու տարիները. «Սուրբ Վալենտինի օրն էր, ես Օքսֆորդում էի, եւ զանգելու հնարավորություն չկար: Ես նրա համար գնեցի արծաթյա շատ գեղեցիկ սրտիկներ, որի հետ կուլոն ու ականջօղեր կային, ու մի գեղեցիկ բացիկով ուղարկեցի Երեւան: Հավանաբար ավելի օրիգինալ բան ես չէի կարող անել այդ ստանդարտ իրավիճակում»:

Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանն էլ «Առավոտի» հետ զրույցում ասաց, որ կանանց տոների առթիվ ավանդաբար ծաղիկներ եւ օծանելիք է նվիրում տիկնոջը: Մեր այն հարցին, թե որեւէ յուրահատուկ նվեր չի՞ պատրաստում, նախարարն ասաց. «Վերջին շրջանում ինչ-որ չի ստացվում օրիգինալ նվերներ անել: Արդեն սովորություն են դարձել ծաղիկներն ու օծանելիքը»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Չհասցրեց ինքնահրկիզվել՝ ոստիկանները տարան բաժին

Հայկական Ֆեմիդայից դժգոհ Ֆեմիդան երեկ մտադիր էր նախագահական նստավայրի առաջ ինքնահրկիզվել, հետո «դեպքի վայրը» փոխեց ու գնաց Եղեռնի հուշահամալիր:

ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի հեռակա ֆակուլտետի նախկին դեկան, Իջեւանի 52-ամյա բնակիչ Ֆեմիդա Դավթյանը «Առավոտի» հետ զրույցում երեկ հայտարարել էր, որ մտադիր է մարտի 7-ին նախագահական նստավայրի առաջ իրեն հրկիզել:

«Հիմա Սեւանում եմ, Երեւան գնալու ճանապարհին, երկու ժամից նախագահական նստավայրի առաջ ինձ վրա 10 լիտր բենզին եմ լցնելու, վառեմ»,- նրա հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ ասաց տիկին Ֆեմիդան: Օրեր առաջ նա հայտնել էր, որ մտադիր է մարտի 8-ի նախաշեմին հրապարակային ձեւով վերջ տալ կյանքին: Ֆեմիդա (իսկական անունը՝ Ֆելմիրա) Դավթյանը 2009թ. մարտի 27-ին ձերբակալվել էր հեռակա սովորող մի ուսանողից 100 հազար դրամ կաշառք վերցնելու համար: Կաշառքը տրվել էր ուսանողի կողմից՝ ընդհանուր առմամբ 12 քննություն եւ ստուգարք ստանալու համար: Ֆեմիդան իրեն մեղավոր չի համարում, ասում է, որ այդ գումարը պիտի ծախսվեր մասնաճյուղի՝ Երեւանից ժամանած դասախոսների համար «հաց սարքելու» նպատակով: Նա դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: 2011թ. փետրվարի 10-ից Ֆեմիդան ազատության մեջ է: Նրա նկատմամբ համաներում է կիրառվել, սակայն դեռեւս մի տարի նա պիտի ներկայանա այլընտրանքային պատիժների կիրառման ծառայության աշխատակցին ու ստորագրի համապատասխան մատյանում: Ֆեմիդան ասում է, որ 30 տարի մատաղ սերնդին կրթել է, սակայն իր տղան՝ 13-ամյա Դեյվիդ Դավթյանը, 5 տարի է՝ դպրոց չի հաճախում: Մոր խոսքերով՝ Դեյվիդը դպրոցի բակում այրել է իր բոլոր դասագրքերը: Տիկին Ֆեմիդան ասաց, որ ազատազրկման շրջանում քրեակատարողական հիմնարկի աշխատողներին իր կողմից տրված կաշառքների, երկար տեւած նախաքննության ընթացքում արված փաստաբանական ծախսերի եւ այլնի վրա ինքը ծախսել է 200 հազար դոլար, որի պատճառով ընտանիքը պարտքերի մեջ է: Նա ցանկանում է գնալ արտերկիր եւ զբաղվել գիտական աշխատանքով, քանի որ Հայաստանում իր մասնագիտությամբ աշխատանք ճարել, 85-ամյա մորը եւ 13-ամյա որդուն կերակրել չի կարող: Նա դիմել է ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու համար:

Երբ մարտի 7-ին, կեսօրից հետո, զանգահարեցի Ֆեմիդա Դավթյանին, ասաց, որ ուղեւորվում է Ծիծեռնակաբերդում գտնվող Եղեռնի հուշահամալիր, որպեսզի այնտեղ ինքնասպան լինի: Ֆեմիդան մեզ հետ զրույցում ասաց, որ Եղեռնի հուշահամալիր իր հետ պլակատներ է տանում. այնտեղ նախ կտրելու է իր երակները, հետո ինքնահրկիզվելու է: Կնոջ խոսքերով՝ իր մտադրության մասին գիտեն Հայաստանում օտարերկրյա դեսպանները. «Անհնար է ապրել վախի մթնոլորտում: Թող հայ վամպիրները լափեն իմ արյունը, հագենան»,- ասաց Ֆեմիդան:

Չի բացառվում, որ 13-ամյա երեխայի մայրը ոչ թե ինքնասպան լինելու մտադրություն ունի, այլ այս ձեւով հանրության եւ իշխանությունների ուշադրությունն է հրավիրում իր խնդիրների վրա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Գ. Ավելի ուշ՝ երեկոյան, տեղեկացանք, որ Մալաթիայի բաժնի ոստիկանները անսպասելի հայտնվել են Եղեռնի հուշահամալիրում եւ կնոջ ձեռքից խլել վառելանյութը՝ նրան էլ տարել բաժին: Տիկին Ֆեմիդան մեզ փոխանցեց, որ ոստիկաններն իրեն հայտնել են, որ արդեն կարող է երկրից հեռանալ: Նշենք, որ ըստ օրենքի՝ նա կարող է հանրապետությունից դուրս գալ 2013-ի փետրվարից միայն:

Տոնական անակնկալ «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուսի» մասնակիցների համար

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը ուրախ է տեղեկացնել, որ կանանց միջազգային օրվա կապակցությամբ՝ մարտի 8-ից 9-ը, «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուսի» մասնակիցները հետեւյալ նվերները կարող են ստանալ 50% զեղչով, այսինքն՝ օգտագործելով պահանջվող միավորների կեսը:

Նվեր	Անհրաժեշտ միավորներ	Մարտի 8-9 փոխանակելու դեպքում անհրաժեշտ միավորներ	Նվերներ ձեռք բերելու համար անհրաժեշտ է հավաքել ստորեւ նշված հրահանգները
30 րոպե ներցանցային խոսելաժամանակ	80	40	*505*3#
60 րոպե ներցանցային խոսելաժամանակ	150	75	*505*4#
1 օր անսահմանափակ թվով ներցանցային զանգեր կատարելու հնարավորություն	100	50	*505*5#

Ի դեպ, բաժանորդները, որոնք դեռ չեն հասցրել գրանցվել «ՎիվաՍել-ՄՏՍ բոնուս» ծրագրին, կարող են գրանցվել՝ ուղարկելով *505# հրահանգը, կամ պարզապես ուղարկել BONUS բառը 5050 կարճ համարին, կամ էլ գրանցվել «Ինտերնետ օգնական» պորտալից: Գրանցումն արժե 10 դրամ (ներառյալ ԱԱՀ):

«Սուպեր սմարթ բոնուս»՝ MTS Touch 551 եւ MTS Ego հեռախոսներ գնելիս

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ն առաջարկում է «Սուպեր սմարթ բոնուս»՝ MTS Touch 551 եւ MTS Ego հեռախոսներ գնելիս: Ձեռք բերելով MTS Touch 551 կամ MTS Ego՝ բաժանորդը կարող է ստանալ բոնուս հեռախոսի գնի չափով եւ օգտագործել այն գրեթե բոլոր վճարովի ծառայություններից օգտվելիս: «Սուպեր սմարթ բոնուսը» կարելի է օգտագործել մեկ տարվա ընթացքում՝ հետեւյալ ծառայություններից օգտվելիս.

* Զանգեր ցանկացած ուղղությամբ
* SMS-ներ եւ MMS-ներ ցանկացած ուղղությամբ
* Ինտերնետ
* Ինտերնետ-փաթեթ
* Սակագնային պլանի փոփոխություն
* Ռոումինգ
* Զան-ջան («Բարբաո» սակագնային պլանի շրջանակներում)

Բոնուսային հաշվի մնացորդը կարելի է ստուգել՝ ուղարկելով *488# հրահանգը:

«Սուպեր սմարթ բոնուսը» կարելի է ակտիվացնել բոլոր կանխավճարային քարտերի համար՝ բացառությամբ «ՄՏՍ կոնեկտ օրեցօր» եւ «Բիզնես վերահսկում» փաթեթների հեռախոսահամարների:

Բացի այդ, հեռախոսները կարելի է ձեռք բերել նաեւ առանց «Սուպեր սմարթ բոնուսի» հնարավորության: Այս դեպքում MTS Ego-ն արժե 99900 դրամ՝ 149000-ի փոխարեն, իսկ MTS Touch 551-ը՝ 24900 դրամ՝ 47000-ի փոխարեն:

Ա a r a v o t d a i l y
ՀԻՆԳՇԱԲԹԻ 08.03.2012

Վարդան Ղուկասյանը «նալո՞գ» է հավաքում

Գյումրու քաղաքապետարանի նախկին աշխատակիցը համոզված է, որ քաղաքապետ Վարդան Ղուկասյանն իրեն աշխատանքից ազատել է անհիմն:

«Ավանդապահ» է դիմել Հենրիկ Մալխասյանը, որը 2007-ից աշխատել է Գյումրու քաղաքապետարանի Բյուջեի եկամուտների հաշվառման բաժնում՝ որպես գործակալ: Աշխատանքային ավելի քան երեքուկես տարիների ընթացքում նա հասցրել է Վարդան Ղուկասյանի կողմից պարգեւատրվել պատվոգրով: Սակայն մի օր սկսել են քաղաքապետի ու իր աշխատակցի ջրերը մի առվով չհոսել: Այն բանից հետո, երբ Մալխասյանը հրաժարվել է իր արձակուրդային գումարը՝ 124 հազար դրամը, «նվիրաբերել» քաղաքապետարանի շենքի կառուցման «Ֆոնդին», քաղաքապետն ու իր ենթակաները Մալխասյանի հետ «թարսվել են»: «Ինչո՞ւ իմ երեխեքի բերնից կտրեմ՝ տամ իրանց: Մալխասյանից հույսներդ կտրեք»,- հայտարարել է աշխատակիցը, ու դրանից հետո տեղի է ունեցել հրմշտոց իր եւ քաղաքապետարանի որոշ աշխատակիցների միջեւ: Այդ միջադեպից հետո Մալխասյանը դարձել է քաղաքապետարանի համար «անցանկալի անձ»: Այնուհետեւ՝ «2011թ. հունիսի 21-ին մեր բաժնի կոորդինացնող, դրամաշնորհ Փափազյանի եւ նրա հանցակիցներ՝ Գագիկ Հովհաննիսյանի, Կարինե Ղազարյանի, Արմենուհի Հարությունյանի, Օլեգ Ղափանյանի, Սոս Նահապետյանի դավադիր զեկուցագրերի հիման վրա արհեստական քրեական գործ հարուցեցին ինձ վրա: Փափազյանը պատճառաբանում է, որ ինձ գործի ընդունելու ժամանակ Ղուկասյանը ինձնից գումար, այսինքն՝ մաղարիչ չի վերցրել: Քրգործը ավարտվեց դատարանում՝ տուգանքով: Քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Բ. Ալեքսանովն առանց ինձ տեղյակ պահելու, հանգամանքները պարզելու՝ ինձ ազատեց աշխատանքից: Իսկ 3 օրվա ընթացքում՝ 21.06.11-24.06.11-ը, մի արարքի համար տվել է երկու նկատողություն եւ 24.06.11-ին էլ լուծարել իմ աշխատանքային պայմանագիրը: Թե՛ կարգապահական տույժի կիրառումը, թե՛ ինձ աշխատանքից ազատելը եղել է անօրինական եւ աշխատանքային կոլեկտիվի հետ չի քննարկվել»,- ասում է Հ. Մալխասյանը: Նա մեզ հետ զրույցում ասաց, որ իրեն ահաբեկում են, անվանում «շանտաժիստ», իսկ քաղաքապետարանում տեղի ունեցող հանցանքները քողարկվում են ՀՀԿ-ի կողմից. «Սահմանադրության մի քանի հոդվածներ են խախտվել, որը քաղհայցով գտնվում է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Խաչատրյանի վարույթում: 24.06.11թ.-ից զուգահեռ՝ մարզի քննչական բաժնում մեկ այլ քննիչ պրն Գաբրիելյանի վարույթում արդեն 9 ամիս նյութեր են նախապատրաստվում շարաշահումների, կեղծիքների մասին: Քննիչին խուսափում են նյութեր, տեղեկություն տրամադրել: Փոխքաղաքապետ Գ. Մանուկյանը եւ աշխատակազմի ղեկավարը իրենց հանցախմբով խոչընդոտում են քննիչի օրինական գործունեությանը, իբր՝ բոլոր փաստարկները սուտ են»,- ասում է Մալխասյանը եւ հավաստիացնում, որ քաղաքապետ Վ. Ղուկասյանը արգելել է քաղաքապետարանի աշխատակիցներին ներկայանալ քննչական բաժին, բացատրություններ տալ:

Իսկ Փափազյանը լուրեր է տարածել այն մասին, որ Վ. Ղուկասյանը միջնորդել է գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին, մարզի դատախազ Դ. Սարգսյանին եւ գործը «ջրել»: «Դրա մասին է վկայում, որ բազմակի դիմումներս՝ ուղղված ՀՀ նախագահին, վարչապետին, դատախազությանը, ոստիկանապետին, ուղղվում են դատախազ Դ. Սարգսյանին, եւ նա արդեն 9 ամիս է՝ խոչընդոտում է վերոհիշյալ անձանց նկատմամբ քրեական գործ հարուցել»,- դժգոհում է Մալխասյանը՝ ասելով, որ ս/թ փետրվարի 2-ին դատական նիստից հետո, ժամը 18.30 սահմաններում, տուն գնալիս 4 անհայտ անձ հարձակվել են իր վրա, ֆիզիկական ճնշման ենթարկել, պահանջել, որպեսզի դատարանից հետ վերցնի 2 քաղհայցերի պահանջները եւ քննչական բաժնին տված նյութերը: Մալխասյանն ասում է, որ այդ միջադեպի հետեւանքով իր առողջական վիճակը վատացել է, եւ ինքը բուժվել է Գյումրու «Սամարիթեր» հիվանդանոցում: Այնուամենայնիվ, քաղաքապետարանի նախկին աշխատակիցն անդրդվելի է եւ պնդում է. «Մտադիր չեմ հետ վերցնել քաղհայցերս եւ քննչական բաժին ներկայացրած նյութերս»: Նրա խոսքերով՝ ինքը պարտավոր չէ քաղաքապետարանի շենքի կառուցման համար տալ իր աշխատավարձը, քանի որ բյուջեից դրա համար գումարներ են տրամադրվել: Նա փաստում է, որ անգամ շենքը շահագործելուց հետո քաղաքապետարանի աշխատակից, ավագ մասնագետ Համիկ Փափազյանը բոլորից «նալոգ» է հավաքում՝ 5000-10000 դրամ, պատճառաբանելով, թե կատարվելու են ներքին հարդարման աշխատանքներ: Իսկ աշխատակիցներին պարտադրում են հրաժարվել արձակուրդային գումարներից, որպեսզի դրանք նույնպես «նվիրաբերվեն» շենքին:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

Սիրո առաջին համբույրը՝ երկնքում

«Կա մի վարժության ձեւ, երբ օդում գալիս, զույգերով միանում ենք իրար, այդ ժամանակ էլ անակնկալ ձեւով համբուրեց»: Համբուրվողը կապիտան Քրիստինա Իլիկյանն էր, համբուրողը՝ նրա ամուսինը՝ գնդապետ Թեւոս Իլիկյանը: Արդեն 22 տարվա զինվորական զույգը ծանոթացել ու սիրահարվել է թռիչքների ընթացքում՝ օդում, աղա երկնային սերը դարձել է երկրային ու շարունակվում է մինչեւ հիմա: «Առավոտի» թղթակիցը Կանանց միջազգային օրվա կապակցությամբ հանդիպել, շնորհավորել ու զրուցել է պաշտպանության նախարարության թիվ N զորամասի որոնողափրկարարական եւ պարաշյուտադեսանտային ծառայության պետ, կապիտան Քրիստինա Իլիկյանի հետ:

- Տիկին Իլիկյան, մեր կյանքում կան բնագավառներ՝ այդ թվում նաեւ բանակը, որտեղ կանանց ներկայությունը, մի տեսակ, արտասովոր է եւ հաճախ զարմանք է հարուցում: Այդ առումով Ձեզ համար դժվա՞ր է բանակում:

- Ինչքան էլ իմ մասնագիտությունը համարվի տղամարդկային ու առօրյայում ավելի հաճախ շփվեմ հակառակ սեռի հետ, միեւնույն է՝ կյանքում ոչ մի վայրկյան չեմ դադարել ինձ կին զգալ: Ինչ մասնագիտություն էլ ունենաս, նախեւառաջ դու կին ես: Գուցե մի փոքր ավելի ուժեղ, քան մյուս կանայք, բայց ոչ տղամարդուց ուժեղ: Ես չէի ուզենա, որ ինձ ասեին՝ տղամարդու ես նման (ծիծաղում է.- հեղ.):

- Համաձա՞յն եք, որ բանակում՝ լինես կին, թե տղամարդ, նախեւառաջ պետք է լինել ուժեղ, որ քեզ նայող զինվորը ոգեւորվի, խիզախություն զգա:

- Միանշանակ համաձայն եմ: Բանակում, զինվորի առջեւ, դու պետք է նույնքան ուժեղ ու ամուր լինես, որքան տղամարդ զինվորականը, կամ գոնե ցույց տաս, որ այդպիսին ես: Քանի որ քո աչքերին նայող զինվորը քեզ հավատում է, իսկ իր վստահությունը չկորցնելու համար պետք է ամուր լինես: Եթե դու իր մոտ վստահություն ձեռք չբերես, եթե չկարողանաս թռիչքից առաջ իր մեջ եղած այդ վախը հանել, հավատացնել, որ դու իր կողքին ես, աղա, Աստված մի արասցե, պատերազմի դեպքում նա ինչպե՞ս է առանց վստահության ու հավատի իրեն ու քեզ պաշտպանելու:

- Խոսեցիք թռչելու վախից: Զինվորներին ինչպե՞ս եք պատրաստում թռիչքի, որպեսզի վերեւում վախի զգացում չունենան:

- Մենք զինծառայողներին այնպես ենք սովորեցնում, որ գիշերն էլ քնից արթնացնեն ու հարցնեն՝ թռիչքի ժամանակ օդում ի՞նչ պետք է անել, կասեն: Ամեն ինչ պետք է իմանան ու լավ իմանան, քանի որ օդում հրահանգիչը իրենց կողքին չէ, եւ յուրաքանչյուր սխալ կարող է ճակատագրական լինել: Թռիչքից առաջ զինվորներին փորձում ենք տրամադրել: Անչափ կարեւոր է մինչեւ թռիչքը զինվորների հետ ճիշտ հոգեբանական աշխատանք տանել, որ վերեւում՝ ուղղաթիռի մեջ, կարողանան հաղթահարել վախն ու անպայման թռչել, քանի որ թռիչքից հետո նրանք այնքան են փոխվում... Նրանց աչքերը մի ուրիշ ձեւով են փայլում: Այդ աչքերը տեսնելու համար արժե շարչարվել:

- Տարբե՞ր են զգացողությունները, երբ դու ես թռչում, ու երբ թռչում է զինվորդ:

- Իհարկե, տարբեր են: Երբ դու ես օդում, պատասխանատու ես միայն քեզ համար, երբ զինվորն է օդում, պատասխանատու ես նրա համար, նրա հարազատների առաջ: Անհանգստությունը, լարվածությունը շատ է, բայց սիրում եմ մասնագիտությունս, զինվորներին: Հպարտ եմ, որ չեմ սխալվել ու ծառայում եմ հայկական բանակում:

- Դուք դեռ 18 տարեկան էլ չկայիք, երբ ծառայության անցաք: Ինչպե՞ս եղավ, որ հայտնվեցիք Զինված ուժերում:

- 1992 թվականն էր: Այնպես ստացվեց, որ այդ տարիները բավականին բարդ ու ծանր էին Հայաստանի համար: Պետք էր աշխատել, ու ընդունվեցի զորամաս: Մեր բանակը նոր էր ձեւավորվում: Պարաշյուտադեսանտային ծառայությունում կադրերի պակաս կար: Ես էլ, քանի որ այդ գործից հասկանում էի, ընդունվեցի այնտեղ: Աշխատում էի որպես հրահանգիչ: Չնայած դժվար տարիներ էին եւ պետք էր ոտքով երկար ճանապարհ կտրել աշխատանքի հասնելու համար, սակայն երբեք չէինք դժգոհում. պետք էր՝ անում էինք, ու կարեւորը՝ սիրով էինք անում: Ու երբեք չէինք մտածում, թե շատ մեծ բաներ ենք արել մեր բանակի կայացման համար: Սակայն հետագայում մեր գործը նկատվեց ու գնահատվեց: Այս տարիների ընթացքում շատ պարգեւների եմ արժանացել: Դրանցից կառանձնացնեի 2009-ին պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից ստացած «Մարշալ Բաղրամյան» մեդալը:

- Դուք կատարել եք ավելի քան 1800 թռիչք: Ձեզ ավելի աղահով եք զգում օդո՞ւմ, թե՞ երկրի վրա:

- Ինձ աղահով եմ զգում ե՛ւ օդում, ե՛ւ գետնին:

- Առաջին անգամ օդ եք բարձրացել 14 տարեկանում: Ճիշտ է, երկար ժամանակ է անցել առաջին թռիչքից, բայց հավանաբար հիշում եք յուրաքանչյուր դրվագ:

- Իհարկե, հիշում եմ: 1986 թվականի մարտի 29-ն էր: 7-րդ դասարանում էի սովորում: Եկանք Արզնի: Դեռ գետնին ձյուն կար: Պարաշյուտները հագանք ու նստեցինք ուղղաթիռ: Բարձրացանք 1000 մետր: Մինչ օդ բարձրանալը 3 ամիս պարապել ու սովորել էինք, թե օդում ինչ պետք է անենք, որ աղահով գետնին հասնենք: Մինչ ուղղաթիռ նստելը մեզ նաեւ ասել էին, որ թռիչքից հետո կհաշվեք՝ տՈՊՈ , ՐՈՉ. 2 տՈՊՈ , ՊՉՈ. 2 տՈՊՈ , ՑՐՌ ու օղակը կքաշեք, որ պարաշյուտը բացվի: Ստացվեց այնպես, որ խմբից երկրորդը ես պետք է թռչեի. ինձնից առաջ մի հաղթանդամ, կերած-խմած տղա էր: Մտածում էինք, որ հաստատ չի վախենա: Բայց հանկարծ այդ տղան դռան արանքում քարացավ ու ասեց՝ չեմ թռչում: Կանգնել է ու չի շարժվում: Մեկ էլ էն տեսնենք, որ իրեն այնպես խփեցին, որ շամպայնի խցանի պես դուրս թռավ: Էդ ժամանակ մտքումս ասեցի՝ Քրիստինա, դու ինքդ պետք է թռչես, թե չէ քեզ էլ էդպես «կօգնեն»:

- Իսկ օդում ի՞նչ էիք զգում. տրվել էիք զգացողությունների՞ն, թե՞ երազում էիք վայրկյան առաջ աղահով գետնին հասնելու մասին:

- Առաջին թռիչքի ժամանակ չեմ վախեցել ու աչքերս չեմ փակել: Հակառակը, փորձել եմ երկնքից ուսումնասիրել, թե ինչ կա ներքեւում: Կարծես կինոյի դանդաղեցրած կադրեր լինեին աչքիս առջեւի պատկերները: Իրականում, առաջին անգամ մինչեւ փորձում ես հասկանալ, թե ինչ է հետդ կատարվում, արդեն հասնում ես գետնին: Իսկ, այ, երկրորդ անգամ արդեն վախ կա, քանի որ գիտես, թե ինչ է լինելու:

- Գիտեմ, որ առաջին թռիչքից մեկ տարի անց արդեն պարաշյուտային սպորտի Հայաստանի հավաքականի կազմում էիք:

- Այո: Թիմի կազմում 10 հոգի էինք՝ 5 աղջիկ, 5 տղա: Ավագ մարզիչն էլ իմ աղագա ամուսինն էր՝ Թեւոս Իլիկյանը: Մի քանի ամիս պարապելուց հետո սկսեցինք մասնակցել տարբեր՝ համամիութենական եւ միջազգային մրցումների: Հիշում եմ, որ մեր թիմի ամենակարեւոր ելույթը եղավ 90-ականների սկզբին, երբ միջազգային մրցանը ներկայացնում էինք Հայաստանի անկախ Հանրապետությունը եւ հայկական եռագույնով զբաղեցրինք երրորդ պատվավոր տեղը՝ մեզնից ետ թողնելով Վրաստանին եւ Ադրբեջանին:

Պատրաստեց ՏԱՐՈՆ ԿՈԽԼԻԿՅԱՆԸ

Հ. Գ. Մեր զրույցին ներկա էր նաեւ Քրիստինայի ամուսինը՝ ՀՀ Զինված ուժերի ավիացիայի վարչության որոնողափրկարարական եւ պարաշյուտադեսանտային ծառայության պետ, գնդապետ Թեւոս Իլիկյանը, ով կնոջ հետ միասին ղեկավարում է Հայաստանի պարաշյուտային սպորտի Ֆեդերացիան: Էքստրիմով հարուստ սպորտային այս ձեւը զարգացնելու համար նրանց աջակցում է պաշտպանության նախարարությունը, նրանք էլ հայկական բանակի շարքերը համալրում են նոր ու տաղանդավոր պարաշյուտիստներով: «Մեզ մոտ շատ են եղել դեպքերը, երբ եկել են մի անգամ թռչելու, սակայն սիրահարվել են օդին ու դարձել լավ պարաշյուտիստներ»,- ասաց գնդապետ Իլիկյանը:

«Լավ լրագրողներն այսօր պահանջված են»

Հարցազրույց Երեւանի Վ. Բրյուսովի անվան ԵՊՀ «Միջազգային լրագրություն» ԳՈՒ կենտրոնի ղեկավար Տատյանա Հովհաննիսյանի հետ:

- Ինչո՞վ էր պայմանավորված այն, որ այսքան շատ ժուռնալիստիկայի ֆակուլտետների եւ բաժինների մեջ ստեղծվեց ժուռնալիստիկայի բաժին նաեւ ԵՊԼՀ-ում:

- Բաժնի բացումը պայմանավորված էր նոր ֆակուլտետի՝ լեզվաբանություն եւ միջմշակութային հաղորդակցություն, բացումով (2004-ին), նույն ընթացքում էլ որոշվեց այլ մասնագիտությունների թվում նաեւ լրագրությունը ներառել, քանի որ այն լիովին համապատասխանում է լեզվաբանության եւ հաղորդակցության տրամաբանությանը:

- Ինչո՞վ են տարբերվում ձեր ուսանողները այլ բուհերի ուսանողներից, դուք ի՞նչ եք սովորեցնում, որ ուրիշները չեն անում:

- Մեր համալսարանն ունի մի շատ կարեւոր առավելություն. այստեղ շատ մեծ է լեզվաբանության գործոնը եւ օտար լեզուների ուսումնասիրությունը, մեր ուսանողները, ի տարբերություն մյուսների, համալսարանում տիրապետում են նաեւ երկու օտար լեզվի, եւ հատկապես առաջինին նրանք տիրապետում են շատ բարձր մակարդակով: Այժմ մենք գնում ենք նաեւ երկրորդ օտար լեզուն ուժեղացնելու ճանապարհով, որպեսզի մեր ուսանողները, աղագա մասնագետները կարողանան լրագրողական նյութեր պատրաստել նաեւ այլ լեզուներով: Ինչ վերաբերում է լրագրությանը, մենք ավելի շատ կողմ ենք պրակտիկ ուսուցմանը եւ առաջնորդվում ենք «մինիմում՝ տեսական եւ մաքսիմում՝ գործնական» սկզբունքով, քանի որ լրագրությունն ինքնին շատ պրակտիկ մասնագիտություն է: Մենք պարբերաբար քննարկումներ ենք կազմակերպում ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ, որպեսզի մեր ուսումնական պլանները հնարավորինս համապատասխանեցնենք մեդիաշուկայի պահանջներին:

- Ուսանողները պրակտիկա են անցնում տարբեր թերթերում, կայքերում, հեռուստաընկերություններում եւ ռադիոյում,Դուք գո՞հ եք այդ պրակտիկայից, ուսանողները կարողանո՞ւմ են բավարար ինքնադրսեւորվել:

- Այո, ի տարբերություն շատ բուհերի՝ մեզ մոտ պրակտիկային շատ մեծ ուշադրություն է դարձվում, եւ ԶԼՄ-ներում մեր գործընկերները նույնպես շատ պատասխանատվությամբ են վերաբերվում գործին, ինչի համար շատ շնորհակալ ենք: Սա ճեւական բնույթ չի կրում բացարձակապես, ուսանողները գիտեն, որ հաշվետու են լինելու իրենց կատարած աշխատանքի համար: Բացի դրանից, տարբեր

լրատվամիջոցների հայտնի լրագրողներ, ԶԼՄ-ների ղեկավարներ են դասավանդում մեր համալսարանում եւ, բնականաբար, ավելի սրտացավ են մոտենում աղագա լրագրողներ պատրաստելու գործին: Մենք համոզված ենք, որ լրագրողների պատրաստման գործում ակտիվ մասնակցություն պետք է ունենան նաեւ մեդիա-ոլորտի ներկայացուցիչները:

- Իսկ ինչպե՞ս է լուծվում ուսանողներին աշխատանքով ապահովելու հարցը, մանավանդ՝ այսօր լրագրողների պակաս, կարծես թե, չկա:

- Մեզ համար աշխատանքով ապահովելու խնդրի լուծման միջոց է հենց ուսանողների պրակտիկան, մենք ուսանողներին պատրաստում ենք նաեւ հոգեբանորեն: Գաղտնիք չէ, որ կարեւոր են ոչ միայն մասնագիտական գիտելիքները, այլեւ սեփական կարիերան կառուցելու ունակությունները, այն հատկանիշները, որոնք կօգնեն հետագայում որպես մասնագետ դրսեւորվելու համար: Չնայած այսօր լրագրողները եւ լրատվամիջոցները շատ են, այդուհանդերձ, լավ լրագրողները միշտ էլ պահանջված են: Իսկ մենք փորձում ենք պատրաստել միայն լավ լրագրողներ:

ՄԱՐԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊԼՀ միջազգային լրագրության
3-րդ կուրսի ուսանող

Շնորհավոր ձեր մարտի 8-ը, իմ սիրելի ընկերուհիներ

Ես սովորում եմ մի կուրսում, որտեղ բոլոր ուսանողները գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ են, եւ մեր խմբում միայն ես եմ «տգեղ» եւ ուժեղ սեռի ներկայացուցիչ: Պատկերացրի՞ք իմ վիճակը: Այո, շատ դժվարին եւ գրեթե հուսահատական: Ավելորդ է ասել, որ մեր բոլոր աղջիկները ոչ միայն սիրուն են, խնամված, այլեւ լավ են սովորում, զուսպ են, իսկ ես նրանց մեջ մի տեսակ անօգնական եմ ինձ զգում եւ փորձում եմ բոլորի հետ պահպանել լավ հարաբերություններ: Պատկերացնո՞ւմ եք, հակառակ դեպքում ինձ ինչեր են սպասվում: Այսքանը՝ կատակով: Իսկ ավելի լուրջ՝ ուզում եմ շնորհավորել իմ բոլոր ընկերուհիներին, դասախոսուհիներին՝ եւ նրանց ում սիրում եմ, եւ նրանց, ում չեմ սիրում, շնորհավորել եւ մաղթել, որ միշտ այդպես սիրուն լինեն: Իսկ մենք՝ տղամարդիկս, կփորձենք բավարարել բոլորին՝ մեր ուշադրությամբ եւ հոգատարությամբ: Մի բան էլ՝ կուզեի, որ տղամարդիկ կանանց մասին հիշեն եւ հոգ տանեն ոչ միայն տոնական օրերին, այլեւ միշտ: Թող ամեն օր ձեր տոնը լինի, գեղեցկուհիներ:

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊԼՀ միջազգային լրագրության
3-րդ կուրսի ուսանող

Քյանդրբազ

Եթե ես լոակյաց եմ լինում, ուրեմն ֆիլմ եմ դիտել, ուրեմն նաեւ մեծաթես տոպավորվել: Այսօր ես լուռ եմ, վավերագրական ֆիլմ եմ դիտել՝ «Հայաստանի վերջին լարախաղացը»: Վավերագրական ֆիլմեր շատ չեմ դիտել, հայ ռեժիսորների գործերով առանձնաթես չեմ հետաքրքրվել, բայց ահա այսօր փոքրիկ լսարանում ու ոչ մեծ էկրանին իմ առջեւ հառնեց կինոն, այն էլ՝ հայկական վավերագրական, եւ նաեւ հայ ռեժիսորների տաղանդը կինեմատոգրաֆիայում: Ֆիլմի վերջին հատվածը շունչս պահած նայեցի: Իրականությունն անսպասելի էր ու մտածելու, ավելի ճիշտ՝ սարսափելու տեղիք տվեց:

Հիշեցի մանկությանս մոռացված ու երբեք չվերադարձած մի պահ: Լարախաղացներ էին եկել մեր գյուղ: Ծաղրածուն ընկել էր մեր գյուղացի Մարգարիտի հետեւից, վերջինս էլ ճչալով՝ փախչում էր: Հետո ծաղրածուն փող էր հավաքում՝ երեխաների շարանը հետեւից, լարախաղացն էլ թռչում էր երկինք ու էլի իջնում երկինք: Ճիշտ եւ ճիշտ ֆիլմի կադրի նման: Քյանդրբա՛զը: Մեր բարբառով այդպես ենք անվանում լարախաղացներին, ծաղրածուներին եւ նրանց ողջ անձնակազմը: Իմ մանկության քյանդրբազն ու այսօրվա ֆիլմի լարախաղացները: Փաստորեն շատ բան է փոխվել: Լարախաղացներն իրենց մշակույթով անցյալի գիրկն են գնում: Ֆիլմի հերոսը՝ Հովսեփը՝ լարախաղացը՝ վերջինը Հայաստանում, էլ չի ուզում լարախաղաց լինել: Այստեղ կանգ եմ առնում, տեղափոխվում մեր գյուղ, որտեղ ոչ ոք չի ուզում մնալ: Սահմանամերձ է, ու այն դատարկվում է: Մեր գյուղը մարդաշատ էր մի ժամանակ, լարախաղացներ էին գալիս: Մեր գյուղը դատարկվում է կամաց-կամաց, լարախաղացներն էլ չկան: Հաջողություն, հաջողությո՞ւն:

ՀԱՍՄԻԿ ՄԱԿԱՐՅԱՆ
Միջազգային լրագրություն,
մագիստրատուրա

Բնությունը ստեղծված է օգտագործվելու ի շահ մարդկության, ոչ՝ բիզնեսի

Մաշտոցի այգում շարունակվում է բողոքի ակցիան, որը ծագել էր այգում կրոակների եւ խանութների շինարարությունը սկսելու որոշումից հետո: Քաղաքաթեթարանից ոչ մի տեղեկություն կամ պատասխան չստանալուց հետո ուղեւորվեցի այգի եւ զրուցեցի ակցիայի մասնակից՝ մասնագիտությամբ բժիշկ Արա Պետրոսյանի հետ:

- Ինչքա՞ն ժամանակ է, որ մասնակցում եք բողոքի ակցիային, եւ կա՞ն որեւէ փոփոխություններ, արձագանքներ:

- Այստեղ եմ ակցիայի սկսման առաջին իսկ օրից. ժամանակավորապես դադարեցվել է շինարարությունը, մարդկանց քանակն է ավելացել: Մամուլն անմիջապես արձագանքեց, մի քիչ ուշացավ քաղաքաթեթարանը, որի ներկայացուցիչները ընդամենը երկու անգամ փոխհամաձայնության գալու փորձերից հետո կրկին լռում են:

- Մի՞թե հենց շինարարություն սկսելու որոշումն էր, որ գրավեց հանրության ուշադրությունը, քանի որ այգին միշտ այդ անխնամ եւ ուշադրությունից զուրկ էր:

- Գիտե՞ք, այն փաստը, որ այգին կեղտոտ եւ անխնամ վիճակում էր մինչեւ այժմ, կրկին քաղաքաթեթարանի մեղքն է, իսկ այստեղ բետոն լցնելով եւ խանութներ, կրոակներ բացելով այն ավելի մաքուր կամ լավը չեն դարձնի: Այգին գտնվում է Մաշտոցի պողոտայում՝ քաղաքի սրտում, առանց դրա Երեւանը Երեւան չէ:

- Ի՞նչ եք կարծում՝ անհրաժեշտ է մի կողմ քաշվել եւ խնդրի լուծումը թողնել մասնագետների՞ն, թե՞ այն հանրային է:

- Այս խնդրի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ այն քաղաքական չէ, որ կոնկրետ մարդիկ զբաղվեն դրանով, եւ ոչ էլ միայն բնապահպանական է. այն հանրային բնույթ ունի: Այն իր շուրջն է հավաքել տարբեր մասնագիտությունների, հետաքրքրությունների տեր մարդկանց՝ հանուն մեկ ընդհանուր գաղափարի՝ փրկել բնության այս անկյունը կործանվելուց, եւ եւս մեկ անգամ ապացուցենք, որ հասարակությունն է կազմում երկրի հոծ զանգվածը, եւ վերջնական որոշումը նա պետք է կայացնի:

- Ճի՞շտ է արդյոք, որ ակցիայի մասնակիցները որոշակի վճար են ստանում այգում գտնվելու համար:

- Այս հարցը բարձրացնողները կարող են իրենց պատասխանը ստանալ, երբ գան ու տեսնեն, թե ինչպես ենք մենք գալիս այստեղ, ինչով ենք սնվում ու տաքանում՝ ի տարբերություն այլ տեսակի հավաքների, իսկ սա իրականում հավաք չէ, ոչ ոք մեզ չի ապահովում սննդով. ամեն ինչ անում ենք ինքներս: Մենք նաեւ չենք կրում այն թանկարժեք հագուստներից, որոնք պետք է վաճառվեին այգու ենթադրյալ խանութներում, իսկ վճարվում են, անշուշտ, մեզ ամեն օր ուշադիր հետեւող ոստիկանները, քանի որ նրանք իրենց աշխատանքն են կատարում. մենք ինքնակամ ենք այստեղ, այլ ոչ՝ աշխատանքի բերումով:

- Ո՞րն է լինելու հաջորդ քայլը, եւ ի՞նչ սպասումներ ունեն ակցիայի մասնակիցները:

- Հաջորդ քայլը կլինի նման ակցիաները հայկական իրականության մեջ սովորական դարձնելը եւ դրանց օրինակով երկրում առկա այլ լուրջ էկոլոգիական խնդիրների մասին բարձրաձայնելը: Իսկ ակցիայի հիմնական պահանջը եւ ակնկալիքը այգում շինարարական աշխատանքների ոչ թե ժամանակավոր, այլ վերջնական դադարեցումն է. բնությունը ստեղծված է օգտագործվելու ի շահ մարդկության եւ ոչ թե՝ բիզնեսի:

ԱՆՆԱ ԹԱՄԱՄՅԱՆ
միջազգային լրագրության
3-րդ կուրսի ուսանողուհի

VIVA cell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

ՄՇԱԿՈՒՅԹ

Պրիմա պարուհին երազում է կրկին մայրանալ

Բալետային արվեստում բազմաթիվ օրինակներ կան, երբ առաջին մեծության աստղերը իրենց կյանքն անմնացորդ նվիրելով բեմին՝ զրկվել են մայր լինելու երջանկությունից: Հիշատակենք գոնե երեք անուն՝ Գալինա Ուլանովա, Մայա Պլիսեցկայա, Եկատերինա Մաքսիմովա:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի պրիմա պարուհի Ժակլին Սարխոշյանը «Առավոտի» հետ զրույցը սկսեց 20-րդ դարի մեծանուն պարուհի Մայա Պլիսեցկայայի խոսքերով. «Արվեստի մեծագույն երջանկությունը առ ոչինչ է մարդկային երջանկության առջեւ: Ես իմ բոլոր դափնիները կտայի հանուն այն բանի, որ բեմում ինձ ծաղիկ նվիրողների մեջ առաջինը երեխաս լիներ»:

Հայ բալետի աստղը, որ արդեն 20 տարի բեմում է, նշեց, որ համամիտ չէ իր ավագ այն գործընկերների հետ, որոնք առաջնահերթությունը տվել են կարիերային. «Պարուհիներիս մոտ շափազանց կարճ է բեմական կյանքը: Այսօր

աստղ ես՝ երկրպագուներ, բրավոներ, ծաղիկներ, հաճելի աժիոտաժ... սակայն գալիս է մի օր, որ ավարտվում է այդ ամենը, դառնում մարդկային սովորական մի պատմություն»: Պարուհին հավելեց նաեւ, որ դստեր՝ 16-ամյա Լիլիայի ծնվելուց ընդամենը 2 տարի անց ինքն արդեն բեմում էր Նինայի դերապարով՝ Խաչատրյանի «Դիմակահանդեսում»:

Ժակլին Սարխոշյանն ասաց, թե պատրաստ է կրկին մայրանալ, միայն թե աղագա երեխան ունենա արժանի հայր: Կատակեց, թե երկրորդ երեխան գուցե իրեն «արժանացնի» վաստակավորի կոչման:

Տարբեր երկրներում եւ հեղինակավոր բեմերում բալետային գրականության առաջատար մենապարերով հանդես եկած պարուհուց հետաքրքրվեցինք՝ կերտած բոլո՞ր կերպարներն են իրեն հոգեհարազատ: «Դրանք պարզապես դերեր են: Օրինակ, հպարտ ու կրակոտ Կարմենը, նուրբ ու թրթռուն Ժիզելը, գունեղ ու ավանդապահ Գայանեն, սիրող կին Ֆրիգիան... Այս կերպարներում պարզապես կանացի պատմություններ են: Քանի որ մշտապես շահարկվում են ուժեղ եւ թույլ կին արտահայտությունները, ինքս կուզեի լինել թույլ կին՝ ուժեղ տղամարդու կողքին»,- անկեղծացավ Ժակլինը:

Անդրադարձ եղավ նաեւ մեր զրուցակցի բարեգործական համերգներին: Պարուհին նշեց, որ այցելել է հիվանդանոցներ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ մի շարք ելույթներ ունեցել մանկատան երեխաների համար: «Մեզանում բարեգործական բազմաթիվ ծրագրեր են իրականացվում, այդ թվում՝ առաջին դեմքերի հովանավորությամբ: Երազանք ունեմ պարի դասընթացներ անցկացնել մանկական ուղեղային կաթվածով տառապող երեխաների հետ, ինչը թեկուզ դանդաղորեն, բայց կզարգացնի նրանց մկանները՝ փոքր-ինչ օգնելով շարժվել: Աշխարհում այդպիսի պրակտիկա գոյություն ունի: Նման նախագծեր պետք է կանայք նախաձեռնեն՝ հասկանալի պատճառով»,- կարծում է արվեստագետը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

«ՌետրոnFest»-ը՝ Չարենցի հիշատակին

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Է.Է.Մ.ՄԵԴԻԱ ՊՐՈԴԱԿՇՆ» ընկերությունը եւ webtv.am ինտերնետային հեռուստատեսությունը կանցկացնեն երեք ինտերնետային կինոփառատոն՝ «ՌետրոnFest», «ԷկոnFest» եւ «ԴեբյուտFest»: Մարտի 15-ին webtv.am ինտերնետային հեռուստատեսությամբ կմեկնարկի առաջին՝ «ՌետրոnFest» կինոփառատոնը: Փառատոնի առաջին 6 ֆիլմերի մասին webtv.am-ի առաջին հաղորդումը հնարավոր կլինի դիտել մարտի 13-ին՝ Եղիշե Չարենցի ծննդյան օրը: Կազմակերպիչները «ՌետրոnFest»-ը նվիրում են բանաստեղծի ծննդյան 115-ամյակին: Մարտի 15-ից ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածում տեղի կունենա «ՌետրոnFest»-ի բոլոր ֆիլմերի ցուցադրությունը: Յուրաքանչյուր ֆիլմ webtv.am ինտերնետային հեռուստատեսության վիրտուալ կինոթատրոնում կցուցադրվի 6 օր անընդմեջ: Օգտատերերի համակրանքին արժանացած ֆիլմը կընտրվի ինտերնետ քվեարկությամբ: Օգտատերերի համակրանքին արժանացած ֆիլմի ռեժիսորին կտրվի webtv-ի ուղիղ եթերում վարպետության դաս անցկացնելու հնարավորություն: Փառատոնային ֆիլմերի ռեժիսորների հետ կիրականացվեն skype-օրեր:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Օտարներն առաջարկել են համագործակցել

Վերջերս Դուբայում (ԱՄԷ) տեղի ունեցավ «Դեղերի հայտնագործում եւ թերապիա» խորագրով 4-րդ միջազգային գիտաժողովը, վերջինիս շրջանակներում էլ՝ Կենսատեխնոլոգիայի առաջին միջազգային համաժողովը: Գիտաժողովին, որն ուներ 5000 մասնակից՝ 63 երկրից, Հայաստանից հրավիրված էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սիներիկ Հայրապետյանը՝ որպես առանցքային բաժիններից մեկի նախագահ եւ զեկուցող:

«Գիտաժողովը նվիրված էր երկրագնդի բնակչությանը ամենահուզող հարցերից մեկին՝ հիվանդությունների թվի աճին: Նպատակն էր քննարկել նրանց առաջացման, կանխարգելման եւ բուժման բնագավառներում միջազգային ձեռքբերումները: Գիտաժողովի կազմկոմիտեի նախագահն էր Նոբելյան մրցանակակիր Ֆերիդ Մուրադը, դասախոսություններով հանդես գալու համար հրավիրված էին նաեւ հայտնի դեղագործական կազմակերպությունների ղեկավարներ, անվանի գիտնականներ, այդ թվում՝ 7 Նոբելյան մրցանակակիր»,- «Առավոտի» հետ զրույցում նշեց պարոն Հայրապետյանը: Նա հավելեց, որ իր զեկուցումը վերաբերում էր քաղցկեղի առաջացման բջջային մեխանիզմներին. «Զեկուցմանս համար նյութ են հանդիսացել մեր կենտրոնի եւ հանրապետության վեց գիտական հիմնարկությունների աշխատակիցներից ձեւավորված կամավոր թիմի հետազոտությունների արդյունքները: Դրանք բացում են նոր հորիզոններ՝ հիվանդության արագ ախտորոշման եւ բուժման նոր մեթոդների մշակման համար»:

Մեր զրուցակիցը ցավով փաստեց, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի կարգավիճակ ունեցող իրենց կենտրոնի թեմաները պետության կողմից համարվում են ֆինանսավորման ոչ արժանի: Պարոն Հայրապետյանը տեղեկացրեց, որ առաջիկայում հրավիրված է Հնդկաստանում կայանալիք «Կենսահամատեղելիություն եւ կենսահամարժեքություն» խորագրով միջազգային 3-րդ համաժողովին:

«Ներկայումս մեր կենտրոնի ինժեներական խմբի կողմից մշակվում է քաղցկեղի արագ ախտորոշման գործիք: Ուռուցքաբանության կենտրոնի հետ էլ մշակվում է կլինիկական փորձարկումների աշխատանքային ծրագիր:

Մեր թիմը պատրաստվում է դիմել երկրի ղեկավարությանը խնդրանքով՝ համարժեք օժանդակություն ցուցաբերել այդ ծրագրերի իրականացմանը, ինչը հնարավորություն կտա Հայաստանը դարձնել քաղցկեղի ուսումնասիրման տարածաշրջանային գիտաբժշկական կենտրոն: Մենք ունենք բոլոր տվյալները դրա համար: Մեզ արդեն այս ոլորտում առաջարկել են համագործակցել Ֆրանսիացի, լեհ, չեխ, իրաքցի եւ արաբ գիտնականները»,- հավելեց պարոն Հայրապետյանը:

Գ. Հ.

ԺԱՄԱՆՑ

Մարտի ութը՝ առանց արհեստական մաղթանքների

Այսօր մարտի ութն է՝ գեղեցիկ տոն, որը եւս մեկ առիթ է սիրելի կանանց շնորհավորելու, նվերներ անելու, ջերմ ու հաճելի պահեր պարգեւելու համար:

Այս առիթով աղջիկներին շնորհավորելու ավանդույթը Հայաստանում ձեւավորվում է դպրոցից սկսած. անգամ դպրոցահասակ երեխաներն են շնորհավորում իրենց համադասարանցիներին, նվերներ մատուցում, խնջույքներ կազմակերպում: Իսկ ի՞նչ են անում մեծերը...

«Առավոտը» երիտասարդ գրող Դորիանից հետաքրքրվեց՝ գարնանային գեղեցիկ տոնի առիթով

ինքն ո՞ւմ եւ ինչպե՞ս է շնորհավորելու:

«Ճիշտն ասած, որեւէ մեկին այդ օրվա կապակցությամբ հատուկ չեմ այցելում: Զանգ կամ sms հաղորդագրություն եմ նվիրում, ինչի հետ կապված էլ ինձ շնորհակալություն են հայտնում: Հավանաբար իսկապես են շնորհակալ լինում»,- ասաց Դորիանը՝ հավելելով, որ իր ընթերցողուհիներին նվեր է սպասվում, բայց ոչ թե կոնկրետ Մարտի ութի, այլ միամսյակի ընթացքում:

«Ես չեմ ուզում որեւէ արհեստական մաղթանք ասել, կցանկանամ, որ հայ կանայք ու աղջիկներն ազատվեն սերիալախոհանոցային կուսակլիշեներից, ունենան լիարժեք ապրելու համարձակություն, բարձրաձայն խոսելու քաջություն, անկախ լինելու ուժ ու մի քիչ բալանսի բերեն մեր եսօրվա «տղամարդու հասարակությունը»: Երազում եմ, որ կանայք ճանաչեն իրենց իրավունքներն ու գիտակցեն դերը»,- ավելացրեց Դորիանը:

Մշտապես գեղեցիկ սեռի ներկայացուցիչներով շրջապատված, գեղեցկությունը գնահատող եւ աշխարհի տարբեր երկրներում հայ կնոջ գեղեցկությունը «գովազդող» Համաշխարհային գեղեցկության եւ նորաձեւության լիգայի, «Միսս եւ Միստր աշխարհ» միջազգային կազմկոմիտեի նախագահ Աշոտ Խաչատրյանն էլ մեզ հետ զրույցում ասաց, որ ցանկանում է առանձնահատուկ շնորհավորել մայրերին, քույրերին, բոլոր բարի ու ազնիվ կանանց: «Ցանկանում եմ բոլորին ժպիտներ, սեր, երջանկություն, հավերժ գեղեցկություն, քանի որ տգեղ կանայք չկան, կա չնկատված գեղեցկություն, կան իրենց չհետեւող կանայք»,- կարծում է Ա. Խաչատրյանը: Ըստ նրա՝ կոպտությունն ու չարությունը ոչնչացնում են գեղեցկությունը, ուստի խորհուրդ է տալիս կանանց հաճախ նայել հայելու մեջ ու հիշել, որ գեղեցիկ են, հմայիչ եւ դեռ ունենալու են շատ երջանիկ պահեր. «Սիրելի կանայք, թող ձեր սրտերում միշտ արեւոտ գարուններ լինեն: Շնորհավորում եմ նաեւ մեր գեղեցկուհիներին, ցանկանում նրանց մեծ բեմեր ու հաղթանակներ: Իհարկե, առանձնահատուկ շնորհավորում եմ մորս, ցանկանում եմ տիեզերքի չափ երջանկություն, քաջառողջություն եւ երկար տարիների կյանք»:

Քանի որ Աշոտ Խաչատրյանը շատ է ճանապարհորդում, ու ինչպես ինքն է ձեւակերպում՝ նվերներ անելն իր թուլությունն է, արտերկրից միշտ յուրահատուկ նվերներ է բերում հարազատների համար՝ հագուստների, օծանելիքի եւ այլ իրերի տեսքով. «Սիրած աղջիկ դեռ չունեմ, որ նվեր մատուցեմ, բայց ունենալու դեպքում հաստատ ամենաթանկ նվերը որ կանեմ նրա համար, իմ անաղարտ, մաքուր սերը կլինի, ինչն էլ նրան աշխարհի ամենաերջանիկը կդարձնի»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ